ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2026 թվականի N 309-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2026-2027 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ և վճարովի, առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

2. Սահմանել, որ՝

1) միջպետական համաձայնագրերով Հայաստանի Հանրապետության պետական բուհեր ընդունված ուսանողների ուսուցումը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 163-Ն որոշման.

3) սույն որոշման N 1 հավելվածի 4-րդ կետում նախատեսված նպատակային տեղերը հատկացվում են Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի, կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ ընդունված և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական պայմանագիր կնքած ուսանողներին:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում հաստատել բարձրագույն ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով ուսուցմամբ ընդունելության տեղերը՝ ըստ բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնագիտությունների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ն. Փաշինյան**

Երևան

19.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Հավելված N 1**
**ՀՀ կառավարության 2026 թվականի**
**մարտի 19-ի N 309-Ն որոշման**

## 2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

**Բարձրագույն ուսումնական հաստատություններ**

| NN ը/կ | Ուսումնական հաստատության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ |
|---|---|---|
| | **Ընդամենը** | 2921 |

| | | |
|---|---|---|
| 1. | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն ուսումնական հաստատություններ | 2149 |
| 1.1 | ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ (այդ թվում՝ Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի (հայկական բաժանմունք) | 2109 |
| 1.2 | Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի՝ «091202.00.7 Բուժական գործ զինված ուժերում» մասնագիտություն | 20 |
| 1.3 | Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ | 6 |
| 1.4 | «Արարատյան բակալավրիատ» ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունների շրջանավարտներին հատկացված տեղեր | 7 |
| 1.5 | Ազգային փոքրամասնություններին հատկացվող տեղեր | 7 |
| 2. | Սփյուռքահայ ուսանողների ընդունելություն | 70 |
| 3. | Միջպետական համաձայնագրերի շրջանակներում ընդունելությանը հատկացվող տեղեր | 13 |
| 4. | ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացվող նպատակային ընդունելության տեղեր | 273 |
| 5. | Պահուստային տեղ | 107 |
| 6. | ՀՀ պաշտպանության նախարարություն | 309 |
| **7. Վճարովի հիմունքներով ուսուցմամբ ընդունելության ընդհանուր տեղերը** | | **11 000** |

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետի աշխատակազմի**
**ղեկավար** **Ա. Հարությունյան**

19.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Հավելված N 2**
**ՀՀ կառավարության 2026 թվականի**
**մարտի 19-ի N 309-Ն որոշման**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

**Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի հայկական բաժանմունք Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**

| Դասիչը, ուսուցման ձևը | Բուհը, մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ | այդ թվում՝ նպատակային |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* |
| | | | |
| **27. Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան (հայկական բաժանմունք)** | | **27** | |
| 022801.00.6 | Արևելագիտություն | | |

| | | | |
|---|---|---|---|
| | 022801.01.6 Արաբագիտություն | 1 | |
| | 022801.02.6 Թյուրքագիտություն | 2 | |
| | 022801.03.6 Իրանագիտություն | 2 | |
| 041201.00.6 | Ֆինանսներ | | |
| | 041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի) | 1 | |
| 041301.00.6 | Կառավարում | | |
| | 041301.01.6 Կառավարում | 2 | |
| 056802.00.6 | Ֆինանսական մաթեմատիկա | | |
| | 056802.01.6 Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա | 5 | |
| 061101.00.6 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | | |
| | 061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | 14 | |

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետի աշխատակազմի**
**ղեկավար** **Ա. Հարությունյան**